ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ՅԱՒԻՍՏՐԻԱ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահէն՝ Տիկին Լուիզ Մանուկեան-Սիմոնէն, որ տարիներէ ի վեր հաւատարիմ շարունակականութեամբ և օրինակելի նախաձեռնողութեամբ Դուք Ձեր կարևոր մասնակցութիւնը կը բերէք Հայ ազգի մշակոյթի զարգացման գործին՝ ամէն տարի մրցանակ մը յատկացնելով օտար գիտնականի կամ մտաւորականի մը, որ մասնաւոր և արժէքաւոր նպաստ մը բերած է Հայ ժողովուրդի և անոր մշակութային արժէքներու ճանաչման և տարածման այնքան կենսական առաքելութեան:

ՀԲԸ Միութեան միջոցաւ Ձեր կատարած այս հետևողական օժանդակութիւնը վստահաբար քաջալերանքի աղբիւր մը եղած է և պիտի ըլլայ այնպիսի ականաւոր դէմքերու, որոնք իրենց մասնագիտութեան ծիրէն ներս օգտաշատ ներդրումներ կը կատարեն Հայ ժողովուրդի պատմութիւնը, մշակոյթը, ներկայի կացութիւնը և իրագործած արժէքները ուսումնասիրելով և մատչելի դարձնելով օտար ազգերուն:

Ի գնահատութիւն Ձեր այս գովելի նախաձեռնութեան՝ ուրախութիւն ունինք Հայրապետական այսու կոնդակաւ Ձեզի շնորհելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի արդարօրէն և լիապէս վայելէք Ձեր այսքան տարիներու բարերար գործունէութեան պտուղները՝ ի զարգացումն մեր ազգին, մեր Հայրենիքին, մեր Ս. Եկեղեցիին և ՀԲԸ Միութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29 Յունուարի
Յամի Տեառն 1999 և ի Թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/209